

Տ. ՆՈՐՎԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԶԱՔԱՐՅԱՆ

Ծնվել է 1940 թ. հունվարի 31-ին Բեյրութում: Սկզբնական կրթությունն ստացել է Պուրճ Համուդի Աբգարյան ազգային վարժարանում:

1954 թ. ընդունվել է Անթիլիասի դպրեվանք: Այնուհետև ուսումը շարունակել է Բեյրութի ՀԲԸՄ Հովակիմյան-Մանուկյան Երկրորդական վարժարանում:

1958 թ. ընդունվել է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարան:

1959 թ., հոր մահից հետո, ընդհատել է ուսումը և վերադարձել Բեյրութ՝ հոգալու համար ընտանիքի հոգսերը:

1967 թ. բնակության է մեկնել Ֆրանսիա:

1967 թ. դեկտեմբերի 24-ին ձեռնադրվել է սարկավագ:

1968 թ. հոկտեմբերի 27-ին ձեռնադրվել է աբեղա՝ ձեռամբ Սերովբե արքեպս. Մանուկյանի:

1967-1968 թթ. Ռենսիի Դպրոցասեր վարժարանում հայոց լեզու և կրոն է դասավանդել:

1970 թ. փետրվարի 8-ին վարդապետական աստիճան է ստացել՝ ձեռամբ Սերովբե արքեպս. Մանուկյանի:

1970-1974 թթ. աստվածաբանություն է ուսանել Փարիզի կաթոլիկ ինստիտուտում:

1968-1975 թթ. պաշտոնավարել է Փարիզի Ս. Հովհաննես Մկրտիչ առաջնորդանիստ եկեղեցում:

1975-1980 թթ. եղել է Իսի Լե Մուլինոյի Ս. Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվը:

1980 թ. մարտին նշանակվել է Հայրապետական պատվիրակի փոխանորդ Լիոնի շրջանում:

1982 թ. փետրվարի 14-ին ձեռնադրվել և եպիսկոպոս է օծվել ձեռամբ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

1987 թ. Լիոնի կաթոլիկ ինստիտուտում հիմնել է հայ աստվածաբանության ամբիոն, իսկ 1988-ին դարձյալ Լիոնում՝ Մարգարյան-Փափազյան ամենօրյա վարժարանը:

Սրբազան Հայրը հրատարակել է «Յաղագս Գրիգոր Պլտեանի Քերթողութեան «Հատուածներ Սենեակի մասին» և «Մոտեցումներ» հատորները, ինչպես նաև մի շարք կրոնական և գիտական-գրական ուսումնասիրություններ, հոդվածներ:

Սրբազան Հոր պաշտոնավարման շրջանում կառուցվել են Շարվիեռ-Փոն դը Շերվի՝ Ս. Նշան և Սենթ Էթիենի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիները: Նորվան Սրբազանի գործունեությունը բարձր է գնահատվել ֆրանսիական իշխանությունների կողմից: Սրբազան Հայրը պարգևատրվել է «Պատվո Լեգեոն» շքանշանով և կառավարական մի շարք այլ պարգևներով:

2004-2007 թթ. գործուն մասնակցություն է ունեցել Ֆրանսիայի հայոց թեմի Կանոնադրության կազմման աշխատանքներին:

2007 թ. հունիսի 22-ին Ֆրանսիայի նորակազմ հայոց թեմի Թեմական ժողովում ընտրվել է թեմական առաջնորդ: